ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԻ

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1.«*…Եվ սիրտը մոր ասավ տխուր, լացակումած,-*

-Վայ, խեղճ տղաս,

Ոչ մի տեղըդ չը ցավա՞ց»:

(2.5)

- **Իմաստով շատ մոտ ի՞նչ տողեր ես հիշում:** *(1.5)*
- **Ո՞ւմ գրչին են դրանք պատկանում:** *(1)*

Պատասխան՝

- *«-Երթաս բարով, Աստված քեզ հետ,*

Ոտքըդ քարին թող չըգա.

Տըղա՛ս, վերցրու պարկը քեզ հետ,

Պարկը տանը պետք կը գա»:

- *Ավ. Իսահակյան*

2. Տրապիզոնի շոգենավից դուրս եկած և Ղալաթիո նավամատույցի վրա կանգնած ճամփորդը

(3.5)

- **Ո՞ր «պատվական փողոց»-ը պիտի հասներ:** *(0.5)*
- **Ո՞վ էր ճամփորդը:** *(0.5)*
- **Փորձի՛ր կերտել հերոսի դիմանկարը պարոնյանական ոճով:** *(2.5)*

Պատասխան՝

- *Բերա, Ծաղկի փողոց թիվ 2*
- *Աբիսողոմ աղա*
- *«Այս ճամփորդն օժտված էր զույգ մը խոշոր և սև աչքերով, զույգ մը հաստ, սև և երկար հոնքերով, զույգ մը մեծ ականջներով և զույգ մը քիթեր… չէ, չէ, մեկ քիթով, թեպետ և բայց զույգ մը քիթերու տեղ կրնար ծառայել. անոր մեծություն սխալեցուց զիս: Ուներ այնպիսի նայվածք մը, որուն եթե պ. Վարդովյան հանդիպեր յուր աչերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուզես՝ թատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»:*

3….*Նրանք շատ են ու բազմապիսի,*
Յուրաքանչյուրն իր մեջ մի աշխարհ է ուրույն,
Եվ պատմում են նրանք մեզ աշխարհի մասին:
Խոսքերով անկրկնելի և անագորույն…
Եվ այս ամենը՝ մեծ մի դաշնություն կազմած,
Կազմած ուրույն մի կյանք, մի ինքնամփոփ աշխարհ-
Մեր տների փայտյա դարակներում բազմած՝
Ապրում են լուռ կյանքով և կենդանի են հար:

(1.5)

- **Ինչի՞ մասին է գրում Ե. Չարենցը:**

Պատասխան՝ *Գրքերի*

4.

- **Ո՞րն է Լառ-Մարգարի համոզմունքը:**

Պատասխան՝

- «*Ծառդ պտուղ չի տար, …գողության մի վարժեցուր»: /Մեջբերելը պարտադիր չէ/:*

(2)

5. *Սահուն քայլերով, աննշմար, որպես քնքուշ լույսի թև*

Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով,

Վաղորդայն թփերն օրորող հովի պես թեթև

Մի ուրու անցավ, մի փայլուն աղջիկ, նախշուն շորերով:

(2.5)

- **Գտի՛ր Վ. Տերյանի բանաստեղծության փոխված բառերը և գրի՛ր ճիշտ տարբերակը:** *(2)*
- **Ո՞ր բանաստեղծությունից է քառատողը:** *(0.5)*

Պատասխան՝

- *Սահուն քայլերով աննշմար որպես քնքուշ* ***մութի*** *թև*

Մի ստվեր անցավ ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով

Իրիկնաժամին *թփերն օրորող հովի պես թեթև*

Մի ուրու անցավ մի ***գունատ*** *աղջիկ* ***ճերմակ*** *շորերով:*

- *Քառատողը «Տխրություն» բանաստեղծությունից է:*

6. *Քաղաքի ցուցանակներից մեկի վրա գրված է.*

«Իթաքա, Կալիֆոռնիա:

Ուր ուզում ես գնա, տնից լավ տեղ չկա…»…

(2.5)

- **Վ. Սարոյանի «Մարդկային կատակերգություն» ստեղծագործության մեջ հանդիպող այս տողերը Թումանյանի ո՞ր փոխադրությունն են հիշեցնում:** *(1)*
- **Գրի՛ր բանաստեղծական տողերը:** *(1.5)*

Պատասխան՝

- «*Ամենից լավ տունը»*
- *«Ման եկա, մայրիկ, աշխարհից աշխարհ,*
  Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
  Էս գորշ խրճիթն է,
  Էս հին խրճիթն է,
  Գետի եզերքին,
  Ծառերի տակին»:

7. Ղազարապատ-Ալեքսանդրապոլ-Էջմիածին-Գերմանիա-Ուկրաինա-Գերմանիա-Թուրքիա-Ավստրիա-Շվեյցարիա-Իտալիա-Ֆրանսիա-Հունաստան-Հայաստան.

(1)

- **Հայ ո՞ր գրողի թափառումների ճանապարհն է ներկայացված:**

Պատասխան՝ Ավետիք Իսահակյան

8.Լ. Շանթը գրում է, որ Գ. Զոհրապը բարոյական գաղափարներ ունենալով հանդերձ, զուտ գեղարվեստական մոտեցում ունի գրականության հանդեպ և նորավեպերում վարժապետություն չի անում:

(3)

- Ի՞նչ նկատի ունի Լ. Շանթը: *(2)*
- Գ. Զոհրապի նովելների ո՞ր շարքի խորագիրն է դրա ապացույցը:*(1)*

Պատասխան՝

- *Զոհրապը նորավեպերում կյանքի դրվագները ներկայացնում և հերոսներին կերտում է առանց խտացումների և չափազանցումների, այնպիսին, ինչպիսի կան, և բնավ նպատակ չի հետապնդում ընթերցողին խրատելու կամ նրան պատգամներ հղելու: Զոհրապի նպատակը արվեստագետի իր տաղանդով կյանքը ճշգրտորեն ներկայացնել է :*
- *«Կյանքը ինչպես որ է»:*

9.«Թանկ մարդու հիշատակին» հոդվածում Հովհ. Թումանյանը գրում է. *«Աշխարհում մարդիկ կան, որ ապրում են միայն իրենց համար, մարդիկ կան, որ ապրում են ուրիշներին տանջելու համար, մարդիկ էլ կան, որ ապրում են տանջվողներին օգնելու համար: Եվ, ավաղ, ամենից քիչը հենց սրանք են աշխարհքում »:*

(3.5)

- Իմաստային առումով նման ի՞նչ միտք ես հիշում Պ. Սևակից: *(1.5)*
- Որքանո՞վ է նրանց մտահոգությունը արդիական /ինքնուրույն հիմնավորում/:*(2)*

Պատասխան՝

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,

Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում: